



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- դեկտեմբերի 2020 թվականի №--Ա
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ
ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎՈՂ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑԻ ՍՊԱՌՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՅԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Քաջազնունու փողոցի 3-րդ շենքի բակի հարակից տարածքում տեղադրվող արգելափակոցի սպառման համակարգը (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացված՝ քաղաքացի Արա Մկրտչյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2020 թվականի սեպտեմբերի 16-ի դիմումը.

բ) որ Սպառման համակարգի միացումն Ընկերության էլեկտրական ցանցին իրականացվում է համաձայն Դիմող անձի դիմումի՝ որպես առանձին սպառման համակարգ և լրացուցիչ ծախսեր չի առաջացնում,

գ) Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի կողմից տրամադրված 2020 թվականի սեպտեմբերի 15-ի №23/33-Կ-3298 տեղեկանքը, որի համաձայն նշյալ հասցեում արգելափակոցի տեղադրման վերաբերյալ վերջինս առարկություններ չունի,

դ) Ընկերության սույն թվականի դեկտեմբերի 8-ի №ԴԳ4513 և Դիմող անձի դեկտեմբերի 3-ի գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների

13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4-րդ կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալի կողմից տրամադրված 2020 թվականի սեպտեմբերի 15-ի №23/33-Կ-3298 տեղեկանքը:
2. Չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ